ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

Ղ Ե Կ Ա Վ Ա Ր

Երևան – 10, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

« » փետրվարի 2019 թ. N

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ - ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
պարոն ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գալստյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 77-րդ հոդվածի՝ Ձեզ ենք ներկայացնում «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Խ-002-16.01.2019-ՊԻ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը:

Հարգանքով՝

ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱՋԱՆՅԱՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Խ-002-16.01.2019-ՊԻ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

«Լուսավոր Հայաստան» խմբակցության կողմից Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով ներկայացված «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով առաջարկվում է՝

1. Գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննությանը խոչընդոտելու նպատակով փաստաբանի գործունեությանը ցանկացած ձևով միջամտելու համար պատասխանատվության միջոցը խստացնել՝ բացի տուգանքից սահմանելով նաև մեկից մինչև երեք տարի ժամկետով ազատազրկում:

2. Նախնական քննություն վարելու, դատարանի դատավճռի, վճռի կամ դատական այլ ակտի կատարման կամ փաստաբանի մասնագիտական գործունեությունն իրականացնելու առնչությամբ փաստաբանին զրպարտելու համար բացի տուգանքից սահմանել նաև կալանք՝ մեկից մինչև երեք ամիս ժամկետով, կամ առավելագույնը երեք տարի ժամկետով ազատազրկում:

Այդ կապակցությամբ հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից մշակվել և դեռևս 2019 թվականի հունվարի 14-ին շրջանառվել է համանման՝ «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ (այսուհետ՝ նախագիծ), որը տեղադրվել է նաև հանրային քննարկման www.e-draft.am կայքէջում:

Հարկ է նշել, որ ներկայումս նախագիծը գտնվում է շահագրգիռ մարմինների և հասարակության ներկայացուցիչների լայն շրջանակի հետ քննարկման փուլում, որի

արդյունքում նախագծի վերաբերյալ ստացվում են և՛ դրական, և՛ բացասական արձագանքներ, այդ թվում՝ կապված զրպարտության և վիրավորանքի քրեականացման հետ:

Հաշվի առնելով շարադրվածը և նախագծերի միաբնույթ կարգավորումները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորական խմբակցությանն առաջարկում է ներկա փուլում ձեռնպահ մնալ «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծին հետագա ընթացք տալուց, և հարցին անդրադառնալ առաջիկայում Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի քննարկմանը ներկայացվելիք համանման օրենքի նախագծի քննարկումների շրջանակներում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

1 մարտի 2019 թվականի N 199 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար Արտակ Զեյնալյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Խ-002-16.01.2019-ՊԻ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2019 թ. մարտի 1
Երևան

ՆԱԽԱԳԻԾ

Խ-002-16.01.2019-ՊԻ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2003 թվականի ապրիլի 18-ի քրեական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 332-րդ հոդվածը լրացնել նոր 2^1 -ին մասով.

«2^1 . Գործի բազմակողմանի, լրիվ եւ օբյեկտիվ քննությանը խոչընդոտելու նպատակով փաստաբանի գործունեությանը ցանկացած ձեւով միջամտելը, այդ թվում՝ փաստաբանին, կապված նրա մասնագիտական գործունեության կամ լիազորությունների իրականացման հետ, սպառնալը կամ նրան վիրավորանք հասցնելը կամ նրա նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունք ցուցաբերելը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով:»:

Նույն հոդվածի 3-րդ մասում «առաջին կամ երկրորդ» բառերը փոխարինել «1-ին կամ 2-րդ կամ 2^1 -ին» բառերով:

Հոդված 2. Օրենսգրքի 332^3 -րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

«*Հոդված 332^3 . Նոտարի լիազորությունների իրականացմանը խոչընդոտելը կամ, կապված նրա լիազորությունների իրականացման հետ, սպառնալը*

1. Պաշտոնատար անձի կողմից նոտարի լիազորությունների իրականացմանը խոչընդոտելը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ մեկից երեք ամիս ժամկետով:

2. Նոտարի նկատմամբ սպանության, առողջությանը վնաս պատճառելու, գույքը ոչնչացնելու կամ վնասելու սպառնալիքը՝ կապված նրա լիազորությունների իրականացման հետ՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ երկուսից երեք ամիս ժամկետով:»:

Հոդված 3. Օրենսգրքի 344-րդ հոդվածի վերնագրում «հետաքննություն կատարող անձին» բառերից հետո լրացնել «, փաստաբանին» բառը:

Նույն հոդվածի 1-ին մասում՝

- «հետաքննություն կատարող անձին» բառերից հետո լրացնել «, փաստաբանին» բառը,
- «դատական այլ ակտի կատարման հետ» բառերից հետո լրացնել «կամ փաստաբանի մասնագիտական գործունեությունն իրականացնելու առնչությամբ» բառերը:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ վերջին շրջանում հաճախ են դարձել փաստաբաններին իրենց մասնագիտական գործունեության ընթացքում վիրավորելու դեպքերը: Միաժամանակ հարկ է ընդգծել, որ միայն քաղաքացիաիրավական պատասխանատվությունն արդյունավետ միջոց չի հանդիսանում փաստաբանի արժանապատվությունը և գործարար համբավը պաշտպանելու համար: Այս դեպքում անհրաժեշտ է նախատեսել քրեական պատասխանատվություն՝ հատկապես որպես պրևենտիվ միջոց:

Ինչ վերաբերում է փաստաբանին զրպարտելու արարքը քրեականացնելու առաջարկին, ապա, նախ և առաջ, կարևոր է արձանագրել, որ գործող քրեական օրենսգրքի 344-րդ հոդվածի ներկա խմբագրությամբ՝ արդեն իսկ քրեորեն հետապնդելի արարք է որակվում դատախազին, քննիչին, հետաքննություն կատարող անձին կամ դատական ակտերի հարկադիր կատարողին զրպարտելը: Հետևաբար՝ նշված անձանց ցանկում փաստաբանին, որպես արդարադատության իրականացմանը նպաստող կարևոր դերակատարի, չներառելը բացթողում է, որն անհրաժեշտ է լրացնել:

Հատկանշական է, որ նույն օրենսգրքով քրեական պատասխանատվություն է նախատեսվում նաև Մարդու իրավունքների պաշտպանին, կապված նրա լիազորությունների իրականացման հետ, վիրավորելու համար (332[2]-րդ հոդված):

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր մի շարք վճիռներում հատուկ ընդգծել է փաստաբանի մասնագիտության կենտրոնական դերն արդարադատության համակարգում և իրավունքի գերակայության ապահովման գործում: Ինչպես նշել է Եվրոպական դատարանը, առանց անհարկի խոչընդոտների իրենց մասնագիտական գործունեությամբ զբաղվելու փաստաբանների ազատությունը հանդիսանում է ժողովրդավարական հասարակության էական բաղադրիչ և անհրաժեշտ նախապայման Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի պահանջների իրագործման համար[1]:

Այսպիսով, փաստաբանի նկատմամբ նրա մասնագիտական գործունեության հետ կապված որևէ ոտնձգություն և ճնշում անթույլատրելի են և պետք է ստանան խստագույն իրավական գնահատական: Իրավական պետություն կառուցելուն ձգտող հասարակությունում փաստաբանը պետք է լինի հարգված և պաշտպանված ու անխոչընդոտ իրագործի անձին պաշտպանելու իր առաքելությունը:

Ուսումնասիրելով գործող քրեական օրենսգիրքը՝ կարելի է համոզվել, որ մինչ այժմ պատշաճ քրեականացման չի արժանացել փաստաբանի նկատմամբ կատարվող նմանօրինակ ոտնձգությունը: Մասնավորապես, համաձայն 332[3]-րդ հոդվածի 2-րդ մասի՝ փաստաբանի նկատմամբ սպանության, առողջությանը վնաս պատճառելու, գույքը ոչնչացնելու կամ վնասելու սպառնալիքը՝ կապված նրա լիազորությունների իրականացման հետ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի 200-ապատիկից 500-ապատիկի չափով, կամ կալանքով՝ 2-3 ամիս ժամկետով: Այսինքն՝

- մի կողմից, տվյալ հոդվածով պատժելի է բացառապես սպանության, առողջությանը վնաս պատճառելու, գույքը ոչնչացնելու կամ վնասելու սպառնալիքը՝ կապված նրա լիազորությունների իրականացման հետ, այն դեպքում, երբ դատախազի մասով

---

[1] Էյչին ու ուրիշներն ընդդեմ Թուրքիայի վճիռ, գանգատներ թիվ 23145/93 և 25091/94, 669-րդ կետ

երաշխիքները շատ ավելի բարձր են (332-րդ հոդվածի 2-րդ մասի հանցակազմ),

- մյուս կողմից, քննարկվող հոդվածի սանկցիան չափազանց մեղմ է՝ արարքի հանրային վտանգավորությանը համեմատ:

Ավելին, գործով պաշտպանների վրա ճնշումներ գործադրվելու դեպքում, երբ պետությունը որևէ կերպ չի միջամտում և չի ապահովում նրանց անվտանգությունը, համապատասխան դիմումի առկայության դեպքում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը կարող է պետության դեմ վճիռներ կայացնել, ինչը որևէ կերպ չի կարող բխել երկրի շահերից:

Ներկայացված նախագծով դատախազին հավասար երաշխիքներ կսահմանվեն փաստաբանների մասնագիտական գործունեության համար, ինչպես նաև կնախատեսվի

խիստ պատիժ փաստաբանի գործունեությանը ապօրինի միջամտելու, նրան սպառնալու, վիրավորելու, զրպարտելու կամ այլ ձևով փաստաբանի մասնագիտական գործունեությանը միջամտելու համար: